

Պըլկարաններ բայց յիշեանեօթ, մըացեն

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ  
ՑԵՎ ԴՐՈՑԻ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

Յ Ե Կ

ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

378  
Խ-11

ՀԱ. ՕԿՈՒՆԴՐԱ. 8



1930

0120-10

378

Պրոլետարիներ բոլոր յիշելիքների, միացե՛ք

Կ


ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ  
ՅԵՎ ԴՊՐՈՑԻ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ  
ՄԱՍԻՆ

ԽՈՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ  
ԽՈՐՃՐԴԻ ՅԵՎ  
ՀԱՍԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԿՈՒՍՀԱՆՑ ★ 1936

11 SEP 2013

54.024



37<sup>6</sup>

О РАБОТЕ ВЫСШИХ УЧЕБНЫХ ЗАВЕДЕНИЙ  
И О РУКОВОДСТВЕ ВЫСШЕЙ  
ШКОЛОЙ

Армпартиздат, Эреван,

ԽՍՀՄ ժողկոմիսորհը և ՀԱՄԿ (բ)կ Կենտ-  
կոմը բարձրագույն դպրոցում կադրեր պատ-  
րաստելու վիճակը մինչև այժմ ել անբա-  
վարար են համարում:

Բարձրագույն նոր ուսումնական հաստա-  
տություններ կազմակերպելիս և հները ըն-  
դարձակելիս հաճախ աչքաթող ե արվել բար-  
ձրագույն ուսումնական հաստատություննե-  
րի աշխատանքի կարևորագույն պայմանը՝  
նրանց ապահովելը համապատասխան գի-  
տական-մանկավարժական կադրերով, լա-  
բորատորիաներով, կարինեաներով, գրադա-  
րաններով, վորի հետևանքով մի շաբք բար-  
ձրագույն ուսումնական հաստատություննե-  
րում ուսուցման մակարդակը շատ չի տար-  
բերվում միջնակարգ դպրոցի (աելինիկում-  
ների) մակարդակից:

Ուսումնական պլանները մինչև այժմ ել բազմառարկա յեն և, ինչպես նաև ծրագրերը, ամեն տարի յենթարկվում են փոփոխությունների: Բարձրագույն դպրոցի համար մասամբ դասազերքեր չկան, իսկ մի շաբաթ կարևորագույն առարկաների համար բոլորին դասազիրք չկա: Խիստ անբավարար ե մասնագիտականներագմանական գրականության հրատարակումը:

Պրոֆիլների չափազանց մանրացումը և շատությունը, միենույն մասնագիտառթյան կաղըների պատրաստման զուգահեռությունը փոշիացնում են զիտական-մանկավարժական ուժերը, նյութական միջոցները և իջեցնում են բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսուցման վորակը:

Ուսումնական աշխատանքի կազմակերպման մեջ մինչև այժմ ել չի վերացվել ուսուցման այսպես կոչված «բրիզագային» լաբորատոր՝ մեթոդականանված դասախոսությունները փոխարինվում են սակագ վրացկալ դեկավարների հետ կատարվող խմբակային պարագմունքներով, դրա հետ միասին ուսու-

նողները ծանրաբեռնվում են ուսումնական աշխատանքի այլ տեսակներով՝ ի մաս նրանց ինքնուրույն աշխատանքի:

Հակառակ ԽՍՀՄ կենտրոնական սեպտեմբերի 19-ի այն վորոշման, վոր արտադրական պրակտիկան պետք ե կազմի ամբողջ ուսումնական պրոցեսի որգանական մասը—մինչև այժմ ել պատշաճ դեկավարություն չկա ուսուցման այդ կազմով բաղկացուցիչ մասի նկատմամբ: Ժողկոմատները ուսանողական արտադրական պրակտիկայի համար տրամադրում են վոչ բավարար սարքավորված ձեռնարկություններ, կինիկաներ, լաբորատորիաներ և այլն: Անհրաժեշտ վերահսկողություն չկա ուսանողների արտադրական պրակտիկան անցնելու վրա: Խիստ հաշվետվություն չկա պրակտիկայից բարձրագույն ուսումնական հաստատություն վերադարձած ուսանողի կատարած աշխատանքի մասին: Այդ բոլորը չի կարող չհանգել և իրականում հաճախ հանգում ե այն բանին, վոր ուսանողները չեն վարժվում թեորիան պրակտիկայի հետ

զուգակցել, փորձով ստուգել բարձրագույն  
ուսումնական հաստատության մեջ իրենց  
ստացած գիտելիքները:

Չի կատարվում կուսակցության ու կառա-  
վարության դիրեկտիվը՝ բարձրագույն ու-  
սումնական հաստատությունների դիրեկտոր-  
ների միանձնյա ղեկավարման մասին.—դի-  
րեկտորների միանձնյա ղեկավարումը խախ-  
տում են հասարակական կաղմակերպություն-  
ներն իրենց վարչապրությամբ, իսկ դի-  
րեկտորներն իրեն հերթին յերկրորդական  
անձնավորություններին են վերավստահում  
կառավարման մի շարք հիմնական ֆունկցիա-  
ներ:

Բարձրագույն ուսումնական հաստատու-  
թյունների դերեկտորների և հասարակական  
կազմակերպությունների կողմից չկա ամեն-  
որյա հոգատարություն՝ բազմակողմանի կեր-  
պով դաստիարակելու ուսանողին, վորպես  
քաղաքական գիտակցության, կուտուրա-  
կանության և կարգապահության տեսակե-  
տից որինակելի խորհրդային քաղաքացու:

Միանդամայն անբավարար ե դրված բար-

ձրագույն ուսումնական հաստատություննե-  
րի ընդունելությունը: Զկան ընդունելության  
հաստատավես սահմանված միասնական պայ-  
մաններ: Ուսանողության ընդունելության  
կարևորագույն գործը դիրեկտորները հաճախ  
վերավստահում են յերկրորդական աշխա-  
տողների: Ընդունելության քննություն-  
ները մեծ մասմբ կատարվում են վոչ  
բավականաչափ կազմակերպված ձևով, բա-  
ցակայում են բուհերի դիրեկտորների և ժող-  
կումաների բարձրագույն ուսումնական հաս-  
տատությունների վարչությունների անմի-  
ջական մասնակցությունն ու վերահսկողու-  
թյունը: Բարձրագույն ուսումնական հաս-  
տատություն մտնող յուրաքանչյուր անձի  
գիտելիքները մանրազնին ստուգելու փոխա-  
րեն, բուհերի դիրեկտորները, ընկներով ըն-  
դունելության համար սահմանված կոն-  
տինգենտները լրացնելու հետևեց, իշեցնում  
են ընդունվողներին առաջադրվող պահանջ-  
ների մակարդակը: Այդ պատճառով ուսա-  
նողական կազմի մեջ տեղ են գտնում կիսա-  
գրագետ, պատահական մարդիկ:

Շատ ժողկոմատների ղեկավար աշխա-  
տողները մինչև այժմ ել գործնականորեն  
կոնկրետ կերպով չեն ղեկավարում բուհերը,  
բացահայտորեն թերագնահատելով կադրեր  
պատրաստելու պետական կարևորագույն  
գործը և վերջինս վերավստահում են ժող-  
կոմատների յերկրորդական աշխատողներին:  
Բուհերը դեռ ամենեին այնպիսի ուշագու-  
թյան չեն արժանանում, ինչպիսին սովո-  
րաբար արժանանում են ժողկոմատների  
ձեռնարկությունները:

Բարձրագույն ուսումնական հաստատու-  
թյունների ղեկավարման այդ բոլոր թերու-  
թյուններն առանձնահատուկ ուժքնությամբ  
յերևան յեկան վերջին ժամանակներս՝ ար-  
դյունաբերության մեջ ու տրանսպորտում  
ծավալված ստախանովյան շարժման կա-  
պակցությամբ: Ստախանովյան շարժումը  
յերևան բերեց գիտական և ուսումնական  
աշխատանքի շատ հետ մնալը պրակտիկա-  
յից՝ բարձրագույն ուսումնական հաստատու-  
թյուններում: Արանից անհրաժեշտաբար բըղ-  
խում ե՝ վերանայել հնացած ծրագրերը, դա-

սագրքերը, տեղեկատուները, հանրագիտա-  
րանները և տեխնիկական ձեռնարկները՝  
համաձայն ստախանովյան շարժման ար-  
դյունքների, տեխնիկան լիովին ոգտագոր-  
ծելու և աշխատանքի արտադրողականու-  
թյունն արագորեն բարձրացնելու խնդիր-  
ների:

Սոցիալիզմի հաղթանակի պայմաններում,  
յերբ «տեխնիկային տերապետած կադրերն  
են վորոշում ամեն ինչ», բարձրագույն ու-  
սումնական հաստատություններին պետք ե  
ներկայացվեն նոր, ավելի բարձր պահանջ-  
ներ, վորոնք ապահովեն բարձրորակ քա-  
ղաքականապես գաստիարակված, բազմա-  
կողմանի կերպով կրթված և կուլտուրական  
այնպիսի կադրերի պատրաստումը, վորոնք  
ոժտված լինեն «այն բոլոր հարստություն-  
ների ճանաչողությամբ, վոր մշակել ե մարդ-  
կությունը» (Լենին) և ընդունակ լինեն լրիվ  
յուրացնելու գիտության նորագույն նվա-  
ճումները, ամբողջովին ոգտագործեն տեխնի-  
կան և բոլումիկորեն շաղկապեն թեորիան

պրակտիկայի հետ, արտադրական փորձը  
զուգակցեն դիտության հետ:

ԽՍՀՄ ժողկոմիսորհը և Համկ(բ)կ կենտ-  
կոմը վորոշում են:

## I

### ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Բարձրագույն ուսումնական հաստա-  
տությունները մտնելու և այնտեղ ձրի սո-  
վորելու իրավունք ունեն Խորհրդային Մի-  
ության յերկու սեռի բոլոր 17-ից մինչև  
35 տարեկան հասակի քաղաքացիներ, վո-  
րոնք վկայագիր ունեն միջնակարգ դպրոցի  
լրիվ դասընթացն ավարտելու մասին և վո-  
րոնք հաջողությամբ տվել են այդ ուսում-  
նական հաստատությունները մտնելու հա-  
մար սահմանված քննությունները:

2. Բարձրագույն ուսումնական հաստատու-  
թյունները մտնող բոլոր անձինք յենթարկ-

վում են ընդունելության քննությունների՝  
հետեւալ առարկաներից.

ա) ոռւսաց լեզու (գրավոր չարադրու-  
թյուն), բ) քերականություն, գ) գրակա-  
նություն, իսկ այն բարձրագույն ուսում-  
նական հաստատություններում, վորտեղ դա-  
սավանդումը կատարվում է այլ լեզուներով,  
նաև քննություն այն լեզվից, վորով կա-  
տարվում է դասավանդումը տվյալ բուհում,  
դ) քաղզբագիտություն, ե) մաթեմատիկա,  
դ) ֆիզիկա, է) քիմիա, և 1937 թվականից՝ ու-  
սուը լեզուներից վորուել մեկից (անգլերեն,  
գերմաներեն, ֆրանսերեն):

Դյուզատնուեսական և անտեսագիտական  
բարձրագույն ուսումնական հաստատություն-  
ներ մտնողները յենթարկվում են լրացու-  
ցիչ քննությունների աշխարհագրությունից,  
իսկ հումանիտար գիտությունների ուսում-  
նական հաստատություններ (պատմաբանա-  
կան, լեզվաբանական, իրավաբանական) մտնողները՝ պատմությունից և աշխարհա-  
գրությունից:

Շինարարական, ճարտարապետական և նը-

կարչական բարձրագույն ուսումնական հաստատությունները մտնողները յենթարկվում են լրացուցիչ քննությունների նկարչությունից ու գծագրությունից, իսկ յերաժշտական և թատերական բարձրագույն դպրոցներ մտնողները լրացուցիչ քննություննեն տալիս ըստ մասնագիտության:

Բուհեր մտնելիս առաջնություն ե աղբվում այն անձանց, վորոնք ընդունելության քննությունների ժամանակ ամենաբարձր թվանշաններն են ստացել:

Այն անձինք, վորոնք ավարտել են միջնակարգ դպրոցը և ունեն հիմնական առարկաներից «գերազանց» թվանշան, իսկ մյուս առարկաներից (նկարչություն, գծագրություն, յերգեցողություն, յերաժշտություն, ֆիզկուլտուրա) վոչ ցածր, քան «լավ» թվանշանը, բարձրագույն դպրոց են ընդունվում առանց ընդունելության քննությունների:

3. Բարձրագույն ուսումնական հաստատությունները մտնողները դիրեկտորի անունով դիմում են ներկայացնում, կցելով իրենց

ինքնակենսագրությունը և հետեւյալ փաստաթղթերը (իսկականները):

ա) միջնակարգ ուսումնական հաստատությունն ավարտելու վկայագիր,

բ) անձնագիր (ներկայացվում ե անձամբ),

գ) զինապարտները, բացի վերոհիշյալ փաստաթղթերից, աեղեկանք են ներկայացնում զինվորական ծառայության իրենց ունեցած վերաբերմունքի մասին:

4. Ի փոփոխում գոյություն ունեցող պրակտիկայի, յերբ յուրաքանչյուր բարձրագույն ուսումնական հաստատություն իր համար ընդունելության ժամկետներ ե սահմանում—սահմանել հետեւյալ միասնական ժամկետները՝ ԽՍՀՄ բոլոր բարձրագույն ուսումնական հաստատություններն ընդունվելու համար,—բարձրագույն ուսումնական հաստատությունները մտնելու դիմումներն ընդունվում են հունիսի 20-ից մինչև ոգոստոսի 1-ը, ընդունելության քննությունները տեղի յեն ունենում ոգոստոսի 1-ից մինչև 20-ը, ուսանողների ընդունելություննը կատարվում է ոգոստոսի 21-ից մինչև 25-ը:

Արգելել այլ ժամկետներում ընդունելու-  
թյուն կատարելը:

5. Ընդունելության ամբողջ նախապատ-  
րաստումն ու կազմակերպումը, ինչպես և  
ընդունելության քննությունների ընթացքի  
համար պատասխանատվությունը դրվում ե  
ուսումնական հաստատության դիրեկտորի  
վրա, փորի նախագահությամբ (առանց փո-  
խարինելու իրավունքի) ստեղծվում ե ըն-  
դունելության հանձնաժողով՝ հետեւյալ կազ-  
մով՝ դիրեկտորի տեղակալ ուսումնական մա-  
սի գծով, դեկաններ և յերկու պրոֆեսոր:

Բարձրագույն ուսումնական հաստատու-  
թյունների դիրեկտորները և ընդունելության  
հանձնաժողովների անդամները պարտավոր  
են անձամբ ծանոթանալ յուրաքանչյուր ըն-  
դունվողի հետ և անձամբ ստուգել ընդուն-  
վողների բոլոր փաստաթղթերը:

6. Առաջարկել ժողկոմատներին՝ վերա-  
հսկողություն ապահովել բարձրագույն ու-  
սումնական հաստատությունների ընդունե-  
լության ընթացքի վրա և ոգնել դիրեկտոր-  
ներին՝ ճիշտ կազմակերպելու ու ժամանա-

կին անցկացնելու ընդունելությունը, ուղղե-  
լով յերեան յեկած թերությունները հենց  
ընդունելության ընթացքում:

Առաջարկել ժողկոմատներին՝ ի գիտու-  
թյուն ընդհանուրի հրատարակել տեղեկա-  
տուներ բարձրագույն ուսումնական հաստա-  
տությունների մասին, մատնանշելով նրանց  
ֆակուլտետները, բաժիններն ու մասնագի-  
տությունները, ինչպես և ընդունելության  
պայմանները:

7. Ուսանողների փոխադրումը մի բարձ-  
րագույն ուսումնական հաստատություններ-  
իցուս նույնատիպ բարձրագույն հաստա-  
տությունը թույլատրվում ե միմիայն ու-  
սումնական տարին սկսվելուց առաջ, յեր-  
կու բուհերի դիրեկտորների թույլավու-  
թյամբ:

Ուսանողների փոխադրումը տարբեր տեղի  
բարձրագույն ուսումնական հաստատություն-  
ները թույլատրվում ե միայն առաջին յեր-  
կու կուրսերի ուսանողներին՝ ուսումնական  
տարին սկսվելուց առաջ, յերկու բուհերի  
դիրեկտորների թույլավությամբ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

1. Վերացնել բարձրագույն ուսումնական հաստատություններում պարապմունքներն սկսելու, ընդմիջումների և ավարտելու կամայական ժամկետներ սահմանելու պրակտիկան, սահմանելով պարապմունքների սկիզբը բուհերում սեպտեմբերի 1-ից և վերջը՝ հունիսի 30-ին, հետեւյալ ընդհատումներով՝ ձմեռվա արձակուրդը հունվարի 24-ից մինչև փետրվարի 6-ը և ամսավա արձակուրդը՝ հուլիսի 1-ից մինչև ոգոստոսի 31-ը:

Այն բարձրագույն ուսումնական հաստատությունների բարձր կուրսերի համար (3-րդ, 4-րդ և 5-րդ կուրսեր), վորոնց արտադրական պրակտիկան կապված ե սեղոնային աշխատանքի հետ, թույլ տալ ուսումնական տարին սկսել նոյեմբերի 1-ից: Այդ բուհերի ցուցակը հաստատում է ԽՍՀՄ ժողկոմիսորդին կից բարձրագույն դպրոցների չափամութենական կոմիտեն:

2. Ի վերացումն գոյություն ունեցող այն պրակտիկայի, յերբ ուսանողները ծանրաբեռնվում են պարտադիր ուսումնական պարապմունքներով (մինչև 40 ժամ վեցորյակում), կրծատել դասատուների զեկավարությամբ կատարվող պարտադիր պարապմունքների ժամերի թիվը և 1936—37 ուսումնական տարվա սկզբից սահմանել ուսումնական ժամերի հետևյալ թիվը վեցորյակում,— I և II կուրսերում վոչ ավելի քան 30 ժամ, III և IV կուրսերում վոչ ավելի քան 24 ժամ, V կուրսում վոչ ավելի քան 18 ժամ: Յերրորդ և չորրորդ կուրսերի ուսանողների համար առանձնացնել վեցորյակում մեկական որ և վերջին կուրսերի ուսանողների համար յերկուական որ, բացի հանգստի որից, ինքնուրույն պարապմունքների համար:

Առաջարկել բուհերի վարչությունների պետերին և բարձրագույն ուսումնական հաստատությունների ղիբեկաորներին՝ բոլոր անհրաժեշտ պայմաններն ապահովել ուսանողների ինքնուրույն աշխատանքի համար—գրադարանների, գծագրական դահ-



լիճների, լաբորատորիաների, գիտական կառինետների և կրնսուլտացիաների ամենորյա անխափան աշխատանքը:

Ակադեմիական ժամկա տևողությունը սահմանել 45—50 րոպե՝ 10—15 րոպե ընդմիջումով՝ պարագմունքների միջև:

Բոլոր պարագմունքները կազմակերպել հաստատուն դասացուցակով, վորտեղ պետք ենախատեսված լինի ուսումնական պրոցեսի անընդհատ ընթացքն որվա մեջ: Բուհերի դասացուցակը պետք ենախատավի ամբողջ ուսումնական տարվա համար և հրապարակվել ընթացիկ ուսումնական տարին սկսվելուց առաջ:

Սեմետրներում ուսումնասիրվող առարկաների թիվը, վորպես կանոն, 6-ից ավելի չպետք ելինի, իսկ ամեն որ ուսումնասիրվող առարկաների թիվը 3-ից ավելի չպետք ելինի:

## III

### ՈՒՍՈՒՄՆԱԿԸՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՆ ՄԱՍԻՆ

1. Բարձրագույն դպրոցներում դասավանդման գիտական մակարդակը և ուսումնական պարագմունքների վորակը բարձրացնելու նպատակով, ինչպես և ուսանողների մեջ ուսումնական նյութերի վրա ինքնուրույն աշխատանք կատարելու ունակությունն զարգացնելու նպատակով վերացնել հակառակ կտրականապես արգելված լինելուն, գեռաս մի շաբթ բուհերում դասախոսության նյութը վերամշակելու համար կիրառվող խմբակային պարագմունքները, վորոնք հանդիսանում են ժամանակին դաստապարտված այսպես կոչված ուսուցման բրիգադային լաբորատոր մեթոդի մնացորդներ:

Սահմանել դասատուների կատարելիք ուսումնական աշխատանքի հետեւյալ ձևերը, —  
ա) պրոֆեսորների և դոցենտների դասախոսությունները.

բ) գործնական պարագմունքներ լաբորա-

տորիաներում, կաբինետներում, արհեստանոցներում, կլինիկաներում և այլն, վորոնք կատարում են ուսանողները՝ պրոֆեսորների, դոցենտների և ասիստենտների ղեկավարությամբ:

գ) արտադրական պրակտիկա, վորը կատարվում և ուսումնական պլանի համաձայն, պրակտիկայի այս կամ այն տեսակի համար ամբիոնի կողմից հատկապես առանձնացված ղեկավարների ղեկավարությամբ:

Ուսումնական պրոցեսը կազմակերպելիս հատուկ ուշադրություն պետք է դարձնել ուսանողների ինքնուրույն աշխատանքին, վորը նրանք կատարում են ընթերցարաններում, գրադարաններում, արխիվներում, լաբորատորիաներում, կաբինետներում կամ տանը, ապահովելով կոնսուլտացիա ուսանողների համար:

2. Վերացնել ուսանողների առաջադիմության ընթացիկ հաշվառման պրակտիկան, առաջադիմության միակ չափանիշը ընդունելով քննություն տալը դասախոսություննե-

րի կուլսից և ստուգումները՝ գործնական պարապմունքից:

Բոլոր ուսանողները պարտավոր են քըննություն տալ ուսումնական պլանների մեջ մտած յուրաքանչյուր առարկայի լրիվ դասընթացից, ինչպես և ստուգումների յենթարկվել գործնական աշխատանքներից՝ այս ժամանակը, յերբ տվյալ դասընթացը լրիվ լույն և ուսանողների կողմից:

Ինքնուրույն հատվածներ ունեցող բարդ առարկաներից քննություն և տրվում մասմաս, սակայն վոչ հաճախ, քան տարեկան յերկու անգամ:

Քննությունները կատարում են իրենց կոչումներում հաստատված պրոֆեսորները և դոցենտները (նրանք, վորոնք վարում են համապատասխան դասախոսական կուրսերը):

3. Բոլոր բարձրագույն ուսումնական հաստատություններում սահմանել ուսանողների առաջադիմության գնահատման հետևյալ յերեք աստիճանները (թվանշանները՝ ա) անբավարար, բ) բավարար, գ) գերազանց:

4. Ի վերացումն այն կանոննի, վոր վերջին

կուրսիրի ուսանողները պետք եւ պաշտպանեն դիմումային աշխատանքներ, մի կանոն, վորը չի ապահովում ստուգումը, թե բարձրագույն ուսումնական հաստատությունն աշվարտողն Բնչ չափով եւ պատրաստված ըստ մասնագիտության ինքնուրույն աշխատանք կատարելու, բոլոր ուսումնական հաստատություններում, բացի տեխնիկականներից, վորպես կանոն սահմանել պետական քննություն տալը, իսկ տեխնիկական դպրոցներում դիմումային նախագծերի պաշտպանումը՝ ամեն տարի ժողովների կողմից նշանակող հատուկ պետական քննիչ հանձնաժողովներում։ Պետական քննությունները և դիմումային նախագծերի պաշտպանումը կատարվում եւ ամեն տարի հունիսի 1-ից մինչև 30-ը և հոկտեմբերի 1-ից մինչև 31-ը։

Պետական քննություններ տալու և դիմումային նախագծեր պաշտպանելու իրավունք ունեն նրանք, ովքեր քննություններ են տվել և ստուգումների յենթարկվել բարձրագույն ուսումնական հաստատության պահում նախատեսված բոլոր առարկաներից։ Այն ուսա-

նողները, վարոնք չեն կարողացել պետական քննությունները տալ կամ դիմումային նախագծերը պաշտպանել իրավունք ունեն կըկին քննություն տալու հաջորդ տարին։

Առաջարկել ԽՍՀՄ ժողովմիորհին կից բարձրագույն դպրոցների համամիութենական կոմիտեյին՝ Տ ամսվա ընթացքում մըշակել պետական քննիչ հանձնաժողովների կանոնադրությունը և բարձրագույն ուսումնական հաստատությունների գանազան տիպերի համեմատ սահմանել այն առարկաների ցուցակը, զորոնցից պետք եւ քննություն արվի վերոնիշյալ հանձնաժողովներում, ինչպես և սահմանել դիմումային նախագծեր պաշտպանելու կարգը և ներկայացնել ԽՍՀՄ ժողովմիորհին ի հաստատություն։

5. Բոլոր բարձրագույն ուսումնական հաստատություններում մտցնել ուսանողական միասնական տոմս և միասնական մատրիկուլ (ստուգման գրքույկ)։ Մատրիկուլի մեջ մտցվում են այն բոլոր առարկաները, վորոնց անցնալը պարտադիր ե, և գրանցվում են տված քննություններն ու ստուգումները։

Մատրիկուլներում՝ տված քննությունները և ստուգումները նշելու և թվանշաններ դնելու իրավունք ունեն միայն քննություն կատարող պրոֆեսորը և այն դոցենտը, վորոն ստուգում և կատարել:

Առաջարկել ԽՍՀՄ ժողկոմիորհին կից բարձրագույն դպրոցների Կոմիտեյին՝ մի ամսվա ընթացքում մշակել ուսանողական տոմսի ու մատրիկուլի միանալան տիպը, ներկայացնելով դրանք ԽՍՀՄ ժողկոմիորհին ի հաստատություն:

6. Բարձրագույն ուսումնական հաստատություններն ավարտողների համար սահմանել յերկու աստիճանի դիպլոմ:

Առաջին աստիճանի դիպլոմը տրվում է այն ուսանողներին, վորոնք բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտել են բոլոր առարկաների յերեք քառորդից վոչ պակասը «գերազանց» թվանշաններով, իսկ մյուս առարկաներից «բավարար» թվանշաններով, և վորոնք պետական բոլոր քընությունները տվել կամ դիպլոմային նա-

խագծեր են պաշտպանել «գերազանց» գնահատականով:

Ցերկորորդ աստիճանի դիպլոմ և տրվում բարձրագույն ուսումնական հաստատություններն ավարտած, պետական քննություն տված կամ դիպլոմային նախադիմը պաշտպանած բոլոր ուսանողներին:

7. Առաջին աստիճանի դիպլոմ ստացողները նախամեծար իրավունք ունեն:

ա) գրավելու ազատ պաշտոններ՝ ըստ մասնագիտության աշխատանք կատարելու, ինչպես նաև դիտահետազոտական աշխատանքի պաշտօններ բարձրագույն ուսումնական հաստատություններում ու դիտահետազոտական ինստիտուտներում,

բ) ասպիրանտ գառնալու բարձրագույն ուսումնական հաստատությունների համապատասխան ամբիոններին կից.

գ) թե՛ ԽՍՀՄ-ում և թե՛ արտասահման դիտական գործուղման ուղարկվելիք անձանց թեկնածուների թվի մեջ են մտնում:

8. Առաջարկել ԽՍՀՄ ժողկոմիորհին կից բարձրագույն դպրոցների Համամիութենա-

կան Կոմիտեյին՝ ներկայացնել ԽՍՀՄ ժողովում խորհրդին ի հաստատություն բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտելու դիպլոմի (առաջին և յերկրորդ աստիճանի) միասնական տիպը, ինչպես և հրահանդիրական բուհների ավարտման դիպլոմ տալու կարգի մասին:

9. Յեներով այն հանգամանքից, վոր արտադրական պրակտիկան պետք է հանդիսանա ամբողջ ուսումնական պրոցեսի որդանական մասը և ողնի ուսանողին ավելի լավ յուրացնելու թերթեալիկ զիտություններն ու գործադրելու դրանք իր գործնական աշխատանքում.—

ա) սահմաներ վոր ուսանողներն արտադրական պրակտիկայում կատարում են հիմնական աշխատանքների ամբողջ ցեղին՝ ըստ մասնադիտության.

բ) ուսանողներին պրակտիկայի ուղարկել խմբերով՝ բարձրագույն ուսումնական հաստատության կողմից հատկապես առանձնացված դաստառների գեկավարությամբ.

գ) առաջարկել ժողովադատներին՝ բարձ-

րագույն ուսումնական հաստատություններին ամբացնել առնվազն 4—5 տարով ամենից ավելի սարքավորված և լավ կազմակերպված արտադրական ձեռնարկությունները՝ ուսանողների արտադրական պրակտիկան այստեղ կազմակերպելու համար.

դ) առաջարկել ԽՍՀՄ ժողովադատներին կից բարձրագույն գալուցների Համամիջութենական Կոմիտեյին՝ յերեք ամսվա ընթացքում մշակել արտադրական պրակտիկայի կանոնագրությունը, հատկացներով բարձրագույն ուսումնական հաստատությունների նոր ուսումնական պլաններում ժամանակի առնվազն 30 տոկոսն արտադրական պրակտիկային՝ յերկու բարձր կուրսերի համար, հացնելով այդ ժամանակը նայած մասնագիտության, մինչև 40 տոկոսի:

ե) առաջարկել ժողովադատներին՝ 4 ամսվա ընթացքում բոլոր մասնագիտությունների բուհների համար, մշակել արտադրական պրակտիկայի ծրագրեր:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ  
ՄԱՍԻՆ

1. Սահմանելու վոր ժողովրդական կոմիսարները և գերատեսչությունների ղեկավարներն անձնական լիակատար պատասխանատվություն են կրում իրենց սիստեմում գտնվող բարձրագույն ուսումնական հաստատությունների վիճակի ու աշխատանքի համար։

2. Առաջարկել ժողովրդական կոմիսարներին և գերատեսչությունների ղեկավարներին՝ անձամբ ծանոթանալ բարձրագույն ուսումնական հաստատությունների վիճակի հետ և սիստեմատիկաբար լսել բարձրագույն դպրոցների դիրեկտորների ղեկուցումները, ինչպես և ժողովումներին կից խորհուրդների քննությանը զնել բարձր վորակի մասնագետներ պատրաստելու կարևորագույն հարցերը (պատրաստման պլանները, բարձրագույն ուսումնական հաստատություննե-

րում պատրաստվող մասնագետների վորակը և այլն)։

3. Այն բոլոր ժողովումատներում ու գերատեսչություններում, վորոնց գերատեսչության տակ գտնվում են բուհեր — կազմակերպելու ուսումնական հաստատությունների վարչություններ, հանձնաբարելով նրանց բարձրագույն ու միջին վորակի կազմերի պատրաստման ու վերապարաստման ամբողջ աշխատանքի ղեկավարումը և բուհերի բոլոր բնագավառների աշխատանքի տեսչությունը։

Բուհերի վարչություններն անմիջականութեն յենթարկել ժողովրդական կոմիսարներին կամ գերատեսչությունների ղեկավարներին։

4. Առաջարկել ժողովրդական կոմիսարներին և գերատեսչությունների ղեկավարներին՝ ամրացնել ուսումնական հաստատությունների վարչությունների կազմը գիտական մասնագետների վորակությունների կազմը պատասխանական և արտադրական աշխատանքի փորձառություն ունեցող վորակյալ մասնագետներով։

5. Սահմաների վոր բուհերի դիրեկտորը  
լիսկատար պատասխանատվություն և կրում  
խորհրդային պետության առջև բարձրա-  
գույն ուսումնական հաստատության զեկա-  
վարման, ուսանողների ընդունելության և  
ուսուցման ու նրանց մեջ քաղաքականութաս-  
տիաբակչական աշխատանքի կազմակերպ-  
ման համար, բարձրագույն ուսումնական  
հաստատության մեջ կատարվող գիտահետ-  
առաջարկության աշխատանքի ու նրա տնտե-  
սական դրության համար, գիտական ման-  
կավարժական կազմի ընտրության և միջա-  
ռոտագործման համար, ամբիոններին կից  
գիտական-մանկավարժական կազմերի պատ-  
րաստման համար, ուսանողների և դասա-  
տուների կազմի կուլտուրական-կենցաղային  
սպասարկման համար:

6. Յենելով այն խնդիրներից, վոր բարձ-  
րագույն ուսումնական հաստատությունները  
պետք են պատրաստեն բարձրորակ մասնա-  
գետներ, վորոնք կանգնած լինեն ժամանա-  
կակից գիտության մակարդակի վրա, և յե-  
նելով այդ կապակցությամբ բարձրագույն

ուսումնական հաստատությունների դիրեկ-  
տորներին ներկայացվող բարձր պահանջնե-  
րից, ինչպես և դիրեկտորների հեղինակու-  
թյունն ու պատասխանատվությունն ել ա-  
վելի բարձրացնելու նպատակով, սահմանել  
վոր այսուհետև՝

ա) բարձրագույն ուսումնական հաստա-  
տությունների դիրեկտոր կարող են լինել  
միմիայն լրիվ բարձրագույն կրթություն և  
ավագակառում գիտական-մանկավար-  
ժական ու արտադրական աշխատանքի փորձ  
ունեցող անձինք.

բ) բարձրագույն ուսումնական հաստա-  
տությունների դիրեկտորներին հաստատում  
ու փոխում են ԽՍՀՄ Ժողկոմիսորեհին կից  
բարձրագույն դպրոցների Համամիութենա-  
կան կոմիտեն՝ ժողովրդական կոմիսարիատ-  
ների առաջադրանքով.

գ) դիրեկտորներին վարչական տույժերի  
կարող են լինել միմիայն ժողկոմը:

7. ԽՍՀՄ Ժողկոմիսորեհը և ՀամԿ(բ)կ կենտ-  
կոմի առաջարկում են ժողկոմներին՝ բար-  
ձրագույն ուսումնական հաստատություննե-

ըի դիրեկտորների համար ստեղծել նրանց գիտական ու տեխնիկական վորակավորումը բարձրացնելու բոլոր անհրաժեշտ պայմանները (գիտական արձակուրդներ, գիտական գործուղումներ, գրականությունն բերել տալը, գիտական աստիճանի համար դիմերտացիա պատրաստելու նոպատակով աշխատանքից ազատելը և այլն):

8. Դիրեկտորի գիտական և ուսումնական աշխատանքի գծով տեղակալ առաջադրվում ե առաջատար մասնագիտությունների ամենից ավելի վորակյալ պրոֆեսորներից և հաստատում ու փոխվում ե ժողկոմի կողմից:

9. Ֆակուլտետների ղեկաններն առաջադրվում են տվյալ ֆակուլտետի առաջատար առարկաների պրոֆեսորներից և հաստատվում են ժողկոմատի ուսումնական հաստատությունների վարչության պետի կողմից՝ բարձրագույն ուսումնական հաստատության դիրեկտորի առաջադրանքով:

Դեկաններն իրականացնում են ֆակուլտետի ուսումնական ու գիտական աշխատանքի միանձնյա ղեկավարությունը:

10. Ամբիոնների ղեկավարներն առաջադրվում են կոնկուրսով և հաստատվում են ԽՍՀՄ ժողկոմիորհին կից բարձրագույն դպրոցների չամամիութենական կոմիտեյի կողմից՝ բարձրագույն ուսումնական հաստատության դիրեկտորի առաջադրանքով:

Ամբիոնը ղեկավարելու կոնկուրսին մասնակցելու իրավունք ե արվում պրոֆեսորների կոչում կամ գիտությունների դոկտորի աստիճան ունեցող անձանց:

11. Ամբիոնների դոցենտներն առաջադրվում են կոնկուրսով և հաստատվում են ժողկոմատի բարձրագույն ուսումնական հաստատությունների վարչության պետի կողմից՝ բարձրագույն ուսումնական հաստատության դիրեկտորի առաջադրանքով:

Դոցենտի ազատ պաշտոնի կոնկուրսին մասնակցելու իրավունք ե արվում դոցենտի կոչում կամ գիտությունների թեկնածուի աստիճան ունեցող անձանց:

12. Ամբիոնների աշխատակիցները, — ամսատեխնիկները, գիտական աշխատակիցները, լաբորատորները, — առաջադրվում են անձամբ

ամբիոնի գեկավար պրոֆեսորի կողմից՝ փակութեատի դեկանի համաձայնությամբ, և հաստատվում են բուհի դիրեկտորի կողմից:

13. Ամբիոնի աշխատակիցների առջև իրնութիւ գնելով սիստեմատիկորեն բարձրացնել նրանց գիտական-դասաւուական վորակավորումը, ԽՍՀՄ ժողկոմիսորից և ՀամԿ(բ)կ կենտրոնի առաջարկում են բարձրագույն ուսումնական հաստատությունների դիրեկտորներին և բարձրագույն ուսումնական հաստատությունների վարչությունների պետքին՝ թույլ չտալ զոցենաների, սիստեմաների և ամբիոնների գիտական աշխատողների աշխատանքում համատեղություն, տպահովելով բոլոր անհրաժեշտ պայմանները նրանց գիտական վորակալորումը բարձրացնելու համար:

Առաջարկել ամբիոնների գեկավարներին ամբիոնի յուրաքանչյուր աշխատակցի համար սահմանել գիտա-հետազոտական աշխատանքի անհատական կոնկրետ պլան և պահովել ամբիոնի աշխատական կոնկրետ պլան և

տական ու մանկավարժական վորակավորման սիստեմատիկ բարձրացում:

14. ԽՍՀՄ ժողկոմիսորից և ՀամԿ(բ)կ կենտրոնը գատապարտում են ժողկոմատների և ուսումնական հաստատությունների աշխատակիցների վորոշ մասում տարածված այն հայացքները, թե բարձրագույն ուսումնական հաստատությունների ամբիոնները գիտա-հետազոտական աշխատանքով չպետք ե զբաղվեն, այլ սահմանափակվեն միմիայն ուսումնական-մանկավարժական գործունեյությամբ:

ԽՍՀՄ ժողկոմիսորից և ՀամԿ(բ)կ կենտրոնը մատնանշում են, վոր առանց գիտա-հետազոտական աշխատանքի բարձրագույն ուսումնական հաստատությունները չեն կարող իրականացնել մամնագիտների պատրաստումը ժամանակակից գիտության պահանջման մակարդակով և հսարավոր չեն պատրաստել գիտական-դասախոսական կաղըրեր ու բարձրացնել նրանց վորակը:

ԽՍՀՄ ժողկոմիսորից և ՀամԿ(բ)կ կենտրոնը առաջարկում են բոլոր ժողկոմատներին

ու բարձրագույն ուսումնական հաստատությունների գիրեկտորներին՝ գործնականութեն ապահովիլ ամբողջների գիտահետազոտական աշխատանքի ծավալումը:

15. Արգելել կուսակցական, խորհրդային ու անտեսական կազմակերպություններին՝ կտրել բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտական-մանկավարժական կազմերին նրանց անմիջական աշխատանքից և ոգտագործել նրանց այլ աշխատանքի համար վոչ ըստ մասնագիտության:

16. Արգելել ժողկոմատներին՝ այլ տեղ փոխադրել բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտական-մանկավարժական կազմերին ուսումնական տարվա ընթացքում:

## V

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿՍ.ՐԳ. ՈՒ  
ԿԱՆՈՆԻ ՅԵՎ. ԿԾ.ՐԳ.Ծ.ՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԸՆԿՐԱՆ

1. ԽՍՀՄ ժողկոմխորհը և Համկ(բ)կ կենտկոմը մատնանշում են, վոր վորակյալ մասնագետների պատրաստման բարձր վորակն

ուսումնական հաստատություններում պայմանական վորակում ե բարձրագույն գպրոցում հստակորեն սահմանված կարգ ու կանոնով գիտակցական ամուռ կարգապահությամբ: Այդ նորատակով ԽՍՀՄ ժողկոմխորհը և Համկ(բ)կ կենտկոմը գիրեկտորներին առաջարկում են սահմանել պարագմունքների ճիշտ գասացուցակ և խստորեն պահպանել վերջինս, — ուսումնական նորմալ աշխատանքըն ապահովող լիակատար կարգ հաստատել լարաններում, կարինեաններում, լարութառիաններում, զբաղարաններում, ընթերցարաններում, գպրոցական վորոշ շենքեր ամրացնել ամբողջներին, ապահովել լարութառիանների ու կարինեանների անհրաժեշտ նորոգումն ու լրացումը գիտողական պիտույքներով, լարութառիական սարքավորմամբ, ուսակտիվներով, գծագրական պարագաներով և այլն:

2. Դիրեկտորների ու նրանց տեղակալների և ֆակուլտետների գեկանների ընդունելության որերի ու ժամերի հաստատուն

ցուցակ սահմանել, պրոֆեսորա-դաստիպոսական կազմի համար առանձին և ուսանողների համար առանձին, ուսման ժամերից դուրս:

Սահմանել, վոր բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսումնական կորպուսները և հոնքակացարանները մտնելու իրավունք ունեն միմիայն տվյալ ուսումնական հաստատության ուսանողները, գիտական-մանկավարժական ու վարչական-տեխնիկական անձնակազմը, Այլ անձանց մուտքը թույլ և տրվում միմիայն հատուկ անցագրով:

3. Առաջարկել բուհների դիրեկտորներին՝ ապահովել բարձրագույն ուսումնական հաստատության բոլոր շենքերի նորոգումն ու մաքրելը ժամանակին, ինչպես և կուլտուրական տեսքը նախագավիթներում, սպասարաններում, կուլտուրական սպասարկումը կախարանների մոտ, բուժեաններում ու ճաշարաններում:

4. ԽՍՀՄ Ժողկոմիսորնը և Համկ(բ)կ Կենտկոմը բարձրագույն ուսումնական հաստա-

տությունների դիրեկտորներին առաջարկում են հետեւ ուսանողների գիտեկան դաստիպարակմանն ու առողջությանը և միջոցներ ձեռք առնել որինակելի դրության հասցնելու ուսանողական հանրակացարանները, ապահովելով նրանց մեջ անթերի մաքրությունը և բոլոր անհրաժեշտ սահմանադրական-առողջապահական պայմանները:

ԽՍՀՄ Ժողկոմիսորնը և Համկ(բ)կ Կենտկոմն առաջարկում են բարձրագույն ուսումնական հաստատությունների դիրեկտորներին և Ժողկոմատաների բարձրագույն ուսումնական հաստատությունների վարչությունների պետերին՝

ա) հաստատուն կանոնադրություն սահմանել հանրակացարաններում և ամենայն վճռականությամբ պայքար մղել կանոնադրությունը խախտողների գեմ.

բ) սահմանել, վոր հանրակացարաններում և ուսումնական շենքերում Ժողկոմներ կարելի յե կաղմակերպել միմիայն դիրեկտորի համաձայնությամբ.

գ) թույլ չտալ կամայականորեն նվազեց-  
նել հանրակացարաններում ուսանողների  
բնակելի տարածության համար պետության  
կողմից սահմանված նորմաները, ինչպես և  
թույլ չտալ կողմնակի անձանց բնակվել  
հանրակացարաններում և վորևե բնակչի՝  
ուսումնական կորպուսներում:

5. Պարտավորեցնել ժողովատներին և  
քաղխորհուրդներին՝ մինչև 1936 թ. սեպ-  
տեմբերը բոլոր ուսանողական հանրակա-  
ցարաններն ազատել կողմնակի բնակիչնե-  
րից և ուսումնական շենքերը՝ վորևե բնակ-  
չից: Սույն վորոշումը խախտելու համար մե-  
ղալոր անձանց պատասխանատվության  
կանչել:

6. Առաջարկել ԽՍՀՄ ժողովադիրներին կից  
բարձրագույն դպրոցների համամիութենա-  
կան կոմիտեյին՝ ներկայացնել ԽՍՀՄ կենտ-  
գործկոմի նախագահության ի հաստատու-  
թյուն բարձրագույն դպրոցների նոր կանո-  
նադրությունը՝ մշակված սույն վորոշման  
հիման վրա:

\* \* \*

ԽՍՀՄ ժողովադիրների և Համեկ(թ)կ կենտ-  
կոմը պարտավորեցնում են ԽՍՀՄ ժողովու-  
թյունին կից բարձրագույն դպրոցների կոմի-  
տեյին և ժողովրդական կոմիսարիատներին՝  
ապահովել սույն վորոշման կենսագործումը,  
իսկ կուսակցական ու խորհրդային կազմա-  
կերպություններին՝ ըստ ամենայնի ոգնու-  
թյուն ցույց տալ բարձրագույն ուսումնա-  
կան հաստատությունների գիրեկոորներին՝  
կազմակերպելու ուսումնական աշխատանքը,  
կարգ ու կանոն հաստատելու բուհերում և  
զրանով իսկ անհրաժեշտ պայմաններ ստեղ-  
ծել պատրաստելու բարձրորակ մասնագետ-  
ներ, վորոնք բավարարեն սոցիալիստական  
շինարարության ժամանակակից պահանջնե-  
րին:

ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների  
Խօրհրդի նախագահ՝ Վ. ՄՈՒՌՏՈՎ  
Համեկ(թ)կ կենտրոնական կոմիտեյի  
քարտուղար՝ Ի. ԱՏԱԼԻՆ

1936 թ. հունիսի 23.



~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԱՐԱՆ~~  
քարզմ. Հ. Թուրշյան, սրբ. Վ. Զիդեցյան, տէխն. խմբ.  
Վ. Մանուկյան

Քլավլիտի լիազոր C—1080, պատվեր № 244,  
հրատ. № 384, տիրաժ 1500, ինդեքս Ա—84  
PK

Հանձնված և արտադրության 11/VII 1936 թ.  
ստորագրված և տպագրության 25/VII 1936 թ.

Գինը 30 կոպ.

Հայկական տպարան, Ալլահվերդյան № 27, Երևան

ՀՀ Ազգային գրադարան



NL0237489

54.024

ԳԻՒԸ 30 4.



О РАБОТЕ ВЫСШИХ УЧЕБНЫХ  
ЗАВЕДЕНИЙ И О РУКОВОДСТВЕ  
ВЫШЕЙ ШКОЛОЙ

Армпартшвадат, Эривань